Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ

ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒԻ

ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Այն քարոզաշարը հրատարակւում է

LINCY FOUNDATION-*ի*

մեկենասութեամբ

ԳԱՆՁԱՍԱՐ

Երեւան 1995

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՄԱՍԻՆ*

> **«Այն կենաց ծառ է ամենքի համար, ովքեր պատսպարւում են նրանով եւ հաստատութեամբ յենւում նրա վրայ՝ իբրեւ Տիրոջ»[1]:**

Մարգարէների մեծ նախնին՝ աշխարհի ստեղծման մասին պատմող աստուածային Մովսէսն ասում է, որ սկզբում Աստուած դրախտը տնկեց Եդեմում՝ արեւելքում, եւ նրա մէջ՝ կենաց ծառը[2], որից Ադամը զրկուեց իր պատուիրանազանցութիւնից յետոյ ըստ աստուածային հրամանի. **«Գուցէ ձեռքը մեկնի կենաց ծառին, ճաշակի պտուղը եւ ապրի յաւիտեան»**[3]: Իսկ վերջին ժամանակներում Տէրը երկրում հաստատեց կենաց ծառը՝ նրանից կախելով կենաց Պտուղը, ինչի մասին դարձեալ վկայում է Մովսէս մարգարէն. **«Պիտի տեսնէք ձեր կեանքը՝ կախուած փայտից»**[4]: Այդ կեանքը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է՝ անմահութեան Պտուղը՝ կախուած խաչափայտից, որ կենաց եւ անմահութեան ծառն է: Որովհետեւ կենաց պտուղն ունեցողն ինքն էլ կենաց ծառ է, քանզի

---

* Տե՛ս Ս. Գրիգոր Տաթեւացի, Քարոզ վասն խաչի, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր», Կ. Պոլիս, 1741, գլ. ՃԼՋ, էջ 531: Ներկայացւում է որոշ կրճատումներով:

1 Տե՛ս Առակ. Գ 18:

2 Տե՛ս Ծն. Բ 8-9:

3 Տե՛ս Ծն. Գ 22:

4 Բ Օր. ԻԲ 66

ամէն մի ծառ իր պտղից է ճանաչւում[1]: Ով հաւատի աչքերով տեսնում է այն եւ ճանաչում մեր Տիրոջը որպէս անմահութեան Պտուղ, իսկ Նրա խաչը՝ որպէս կենաց գործիք, նա հաւատի շնորհիւ ճաշակում է Կենաց Պտուղը, անմահանում եւ զօրանում Նրա իմաստութեամբ: Իսկ ով իր անհաւատութեան պատճառով չի տեսնում այն, մահանում է հոգով, յիմարանում մտքով եւ տկարանում: Քանզի, ինչպէս ասում է առաքեալը, **կորստեան մատնուածների համար խաչի քարոզը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար՝ Աստծոյ զօրութիւն**[2]: Եւ այս մասին է իմաստուն առակողի խօսքը, թէ՝ «**Այն կենաց ծառ է ամենքի համար, ովքեր պատսպարւում են նրանով եւ հաստատութեամբ յենւում նրա վրայ՝ իբրեւ Տիրոջ**»[1*]:

Արդ, երբ **պատսպարւում ենք** խաչով, այսինքն՝ թիկունքով ամրապնդւում նրանով, ինչպէս պարսպով, եւ **յենւում**, այսինքն՝ սրտով հաստատւում նրա վրայ, ինչպէս գաւազանի, երեք տեսակ բարիք ենք ստանում՝ **իմաստութիւն, զօրութիւն** եւ **անմահութիւն**, ինչպէս ասւում է «Երեքսրբեան» աղօթքում. «**Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ**»: Քանզի թէեւ Քրիստոս խաչուեց իբրեւ մարդ, սակայն Աստուած է բնութեամբ. թէեւ հրեաներն իբրեւ մի տկարի խաչեցին Նրան, սակայն հզօր է զօրութեամբ. ու թէեւ Նա մեզ համար մեռաւ, սակայն անմահ է կենդանութեամբ: Ուստի երբ իմացութեամբ եւ հաւատով պատսպարւում ենք այս եռակի բարութեամբ, իմաստնանում ենք ու հասկանում, որ նրա վրայ Խաչուածը Աստուած է եւ անմեղ, սակայն մեռնում է մեր փրկութեան համար, որպէսզի վճարի մեր պարտքերը եւ ազատի մահից: Եւ յոյսով ու սրտով յենւում ենք խաչի վրայ, որպէսզի այն, որ մեծ զօրութեամբ յաղթեց մեր թշնամուն, մեզ եւս զօրացնի՝ յաղթահարելու սատանայի զօրութիւնը: Այլեւ սիրով

1 Ղուկ. Զ 44
2 Ա Կոր. Ա 18

ու հաւատով միանում ենք Քրիստոսին, որպէսզի Իր յաւիտենական կեանքի անմահութեանը տնկակից դարձնի մեզ: Այսպէս իմաստնանում ենք մտքով, զօրանում մարմնով եւ անմահանում հոգով, քանզի **պատսպարւում ենք խաչով**, այսինքն՝ հաւատով, յոյսով եւ սիրով:

Իսկ ասելով՝ **հաստատութեամբ յենւում ենք նրա վրայ**, Սողոմոն Իմաստունը յաւելում է՝ **իբրեւ Տիրոջ**՝ ցոյց տալու համար, որ **Նա, Ով Աստծոյ կերպարանքով էր, մարդկանց նման եղաւ եւ երեւաց մարդու կերպարանքով**[1]: Ինչպէս որ Պօղոս առաքեալն այստեղ ասում է՝ **նման եղաւ մարդկանց**, այնպէս էլ Սողոմոնն ասում է՝ **իբրեւ Տիրոջ**: **Նման**-ը եւ **իբրեւ**-ը նախ եւ առաջ նշանակում է, որ Քրիստոս ոչ թէ սոսկ մարդ էր, այլեւ Տէր, եւ ոչ միայն Տէր, այլեւ մարդացած Աստուած: Ինչպէս նաեւ ցոյց է տալիս, որ Նրան **ծառայի կերպարանքով**[2] տեսնելով՝ չպէտք է թերահաւատ լինենք, այլ անխարդախ մտքով հաստատուենք Նրա մէջ՝ իբրեւ ճշմարիտ Տիրոջ եւ Թագաւորի. եւ ապա կզօրանանք ու կյաղթենք **դժոխքի դռներին**[3]՝ հերձուածողների խօսքերին, որոնց մասին էր ասում առաքեալը. «**Եթէ ճանաչէին Նրան, մի՞թէ փառքի Տիրոջը խաչ կհանէին**»[4]: Եւ ինչպէս որ նա խաչուած Քրիստոսին **փառքի Տէր** է անուանում, այնպէս էլ Սողոմոն Իմաստունը յորդորում է, որ հաւատով հաստատուենք Նրա վրայ՝ իբրեւ ճշմարիտ Տիրոջ եւ խաչուած Աստծոյ: Եւ քանի որ Խաչուածը Աստուած է եւ Տէր, ապա խաչողներն իրաւամբ կոչւում են տիրասպան ու աստուածանենգ: Աստուած է Խաչուածը, ուրեմն Նրանն է խաչը եւ կեանքինը, որի համար էլ սուրբ **Կենաց** փայտը կոչւում է աստուածընկալ եւ կենսաբեր, ինչպէս գրուած է. «**Այն կենաց ծառ է ամենքի համար**»:

1 Տե՛ս Փիլ. Բ 6-7:
2 Տե՛ս Փիլ. Բ 7:
3 Տե՛ս Մատթ. ԺԶ 18:
4 Ա Կոր. Բ 8

Ոմանք ամօթ են համարում Աստծուն խաչուած եւ մեռած ասելը, ինչպէս անհաւատ հրեաները, որ այդ լսելիս գայթակղւում են, իսկ հեթանոսները՝ յիմարացած ծիծաղում: Մինչդեռ առաքեալը գրում է իր աշակերտին. «**Ամօթ մի՛ համարիր վկայել մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, եւ ոչ էլ ինձ՝ Նրա համար կապուածիս**»[1]: Քանզի Քրիստոսի խաչը ոչ թէ ամօթ է, այլ պարծանք քրիստոնեաների համար՝ ըստ առաքեալի. «**Քա՛ւ լիցի ինձ պարծենալ, բայց միայն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով**»[2]: Նոյնպէս եւ Իմաստունն է յորդորում, որ ամօթ չհամարենք այն, այլ հաւատով հաստատուենք Նրա վրայ եւ քարոզենք Խաչուածին իբրեւ ճշմարիտ Տիրոջ, Թագաւորի եւ հաւատացեալների Զօրութեան: «**Հրեաները նշան են հայցում,- ասում է Պօղոս առաքեալը,- իսկ հեթանոսներն իմաստութիւն են փնտրում եւ ո՛չ հաւատ: Մենք քարոզում ենք խաչուած Քրիստոսին որպէս գայթակղութիւն անհաւատ հրեաների եւ յիմարութիւն՝ հեթանոսների համար**»[3]: Իսկ այս խորհուրդը իմաստնաբար ընդունող հաւատացեալների համար **Քրիստոս Աստծոյ զօրութիւնն է եւ Հօր իմաստութիւնը**[4], քանզի Նրանով գոյացան բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածները, եւ **ամէն ինչ կրում եւ նախանամում է Իր զօրութեան խօսքով**[5]: Այսպիսով, Ինքն Աստուածորդին՝ Միածին Բանը, որ մարմնով յայտնուեց երկրի վրայ, Կենաց փրկական խաչի միջոցով մեզ համար եղաւ **իմաստութիւն, արդարութիւն, փրկութիւն եւ սրբութիւն**[6]:

Արդ, այս չորս բառերը ցոյց են տալիս Քրիստոսի խաչի չորս փրկական ներգործութիւնները: Քանզի Ինքը Քրիստոս մեզ համար

1 Տե՛ս Բ Տիմ. Ա 8:
2 Գաղ. Զ 14
3 Տե՛ս Ա Կոր. Ա 22-23:
4 Տե՛ս Ա Կոր. Ա 24:
5 Տե՛ս Եբր. Ա 3:
6 Տե՛ս Ա Կոր. Ա 30:

իմաստութիւն եղաւ Ադամի տգիտութեան փոխարէն, որը չհնազանդուեց պատուիրանին: Եղաւ **արդարութիւն**, քանզի մեզ ազատեց մեր նախնիներին տրուած անէծքի դատավճռից: **Փրկութիւն** եղաւ մահից ու ապականութիւնից, քանզի մարդու հոգին գերուած էր դժոխքի մէջ, իսկ մարմինը՝ գերեզմանի: Եւ քաւելով մեր մեղքերը՝ եղաւ **սրբութիւն**, ինչպէս գրուած է. «**Մեր մեղքերը սրբելով՝ նստեց Մեծութեան աջ կողմում՝ բարձունքներում**»[1]:

Եւ որովհետեւ այս ամէնը Տէրը խաչով հաստատեց մեր մէջ, ուստի նոյն խաչն էլ եղաւ եւ կոչուեց իմաստութիւն, արդարութիւն, փրկութիւն եւ սրբութիւն՝ համապատասխանաբար ունենալով **զօրութիւն, իր նիւթը, ձեւը եւ լինելով մահուան գործիք**: Խաչի զօրութիւնը Քրիստոսն է, որ միացած եւ բեւեռուած է նրա վրայ, նիւթը փայտն է, ձեւը՝ քառակողմ, իսկ մահապատժի գործիք լինելը կեանքի պատճառ եղաւ մեզ համար:

Ա. Խաչը մեզ համար իմաստութիւն է իր զօրութեամբ, որովհետեւ այն տեսնելով՝ նրանից անբաժան ենք ճանաչում Խաչուածին, ինչպէս Ինքն ասաց. «**Այս է Իմ հանգիստը յաւիտեանս յաւիտենից. սրանում պիտի բնակուեմ, քանզի սիրեցի այն**»[2]: Տեսնելով խաչը՝ իմանում ենք, որ Խաչուածը նրա վրայ է անմեղ մարմնով՝ ոչ թէ Իր պարտքերի, այլ մեզ համար. որպէսզի վճարի մեր պարտքերը եւ մահուանից փոխի դէպի կեանք: Եւ գիտենում ենք, որ նրա վրայ Խաչուածը միաժամանակ անմահ է եւ մեռած, այսինքն՝ մեռած է մարմնով, իսկ Աստուածութեամբ կենդանի է. Նա, որ մեռեալ է, նոյն Ինքը անմահ է մնացել, եւ նոյն Անմահն է, որ մեռել է մեզ համար: Այս են խորհրդանշում երկու՝ արեան եւ ջրի վտակները[3]. Տիրոջ կողից արիւն բխեց, քանզի Նա Աստուած է եւ կենդանի

1 Եբր. Ա 3
2 Տե՛ս Սաղմ. ՃԼԱ 14:
3 Տե՛ս Յովհ. ԺԹ 34:

է, եւ ջուր, քանզի մեզ համար մեռել էր մարմնով: Տեսնելով խաչը՝ նաեւ գիտակցում ենք, որ հաւատացեալներս նոյնպէս Նրա մահը եւ անմահութիւնը կրում ենք մեր մէջ, քանզի հաւատով Նրան պատուաստուելով եւ Նրա հետ խաչուելով՝ մեռնում ենք մարմնով եւ կենդանանում հոգով, այսինքն՝ մեր մէջ մեռնում է մեղքը, եւ կենդանանում՝ արդարութիւնը: Այսպէս խաչի զօրութիւնը իմաստութիւն է մեզ՝ հաւատացեալներիս համար:

Բ. Խաչն արդարութիւն է մեզ համար իր նիւթի շնորհիւ, որովհետեւ Աստուած խոստացաւ մարդուն, որ Կենաց ծառից ճաշակելով՝ նա կանմահանայ: Եւ քանի որ չկերաւ, արդարապէս վերստին Կենաց խաչի փայտով անմահացրեց մարդկանց: Եւ որովհետեւ սատանան փայտի միջոցով յաղթեց մարդուն, իրաւամբ նոյն փայտով էլ Տէրը յաղթեց մեզ յաղթողին: Մարդն ընկաւ եւ մեռաւ ծառի ու նրա պտղի պատճառով[1], ուստի արդարացի էր, որ նա փայտով էլ կանգնեցուէր ու կենդանացուէր: Աստուած Ինքը մարդուն արտաքսեց դրախտից, որպէսզի նա չճաշակի Կենաց ծառից եւ չանմահանայ[2], եւ նոյն Ինքն էլ մերձեցրեց Կենաց ծառին, որպէսզի նրա Պտղից ուտելով՝ անմահ լինենք յաւիտեան:

Այսպէս քառակի արդարութեամբ՝ փայտն ընդդէմ փայտի, յաղթութիւնը՝ յաղթութեան, կեանքն ընդդէմ մահուան եւ պարգեւները խոստման դիմաց արդարապէս կատարելով՝ Կենաց եւ անմահութեան փայտը արդարութիւն է մեզ համար:

Գ. Իր քառաթեւ ձեւով խաչը փրկութիւն է մեզ համար, քանզի այն խորհրդանշում է Քրիստոսի չորս բարերարութիւնները[2*]. խաչի վերին մասը ցոյց է տալիս երկնքի արքայութեան բացուելը[3*], ստորին մասը՝ դժոխքի աւերումը[4*], աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողութիւնը:

Քառաթեւ խաչը խորհրդանշում է նաեւ չորս առաքինութիւնները, որոնց վրայ պէտք է տարածել մեր ներքին մարդուն. վերին մասը նշանակն է սիրոյ, ստորինը՝ խոնարհութեան, աջը՝ հնազանդութեան, իսկ ձախը՝ համբերութեան:

Խաչի գլուխը եւ պատուանդանը խորհրդանշում են նրա վրայ խաչուած Քրիստոսի Աստուածութիւնը եւ մարդկութիւնը, աջը՝ արդար հաւատացեալներին տրուող շնորհները, իսկ ձախը՝ մեղաւորներին ու անհաւատներին սպասուող պատուհասը: Այլեւ աջը խորհրդանշում է մարդկանց փրկութիւնը, որ իրագործուում է Աստծոյ աջով, իսկ ձախը՝ սաստը սատանայի հանդէպ՝ խաչի զօրութեամբ:

Խաչի չորս թեւերը խորհրդանշում են նաեւ մեր չորս խոկումները[5*]. վերին մասը՝ **միշտ վերինը խորհելը[6*], ուր Քրիստոս նստած է Աստծոյ աջ կողմում**[1], ստորինը՝ մահուան մասին խոկալը[7*], իսկ աջը եւ ձախը՝ դատաստանի ընտրութեան[8*], այսինքն՝ աջակողմեանների փառքի եւ ձախակողմեանների պատժի մասին: Այլեւ խորհրդանշում է մեր անկումը դրախտի բարձրութիւնից դէպի երկիր եւ այն, որ աջ էինք եւ ձախ դառնալուց յետոյ դէպի նոյնը վերադարձանք Քրիստոսի հանդէպ աջակողմեան հաւատով:

Դ. Խաչը մեզ համար սրբութիւն է՝ մահուան գործիք լինելով:

Խաչափայտը, որ նախկինում մահապատժի եւ անէծքի գործիք էր (**«Անիծեալ է ամենայն ոք, որ կախուած կլինի փայտից»**[2]), Քրիստոս մեզ համար կենաց եւ օրհնութեան միջոց դարձրեց՝ **մեզ գնելով Օրէնքի անէծքից՝ անէծք լինելով մեզ համար**[3]: Եւ մեր մեղքերը սրբելով՝ արդարացրեց մեզ քառաթեւ խաչի վրայ Իր անմեղ Պատարագով, ինչպէս որ Հին Ուխտի գառն էր

---

1 Տե՛ս Ծն. Գ 6-7:

2 Տե՛ս Ծն. Գ 22-24:

1 Տե՛ս Կող. Գ 1:

2 Բ Օր. ԻԱ 23

3 Գաղ. Գ 13

քառակողմ սեղանի վրայ[1]: Եւ սրբութիւնն Ինքը Քրիստոսն է, **Ում Հայրը սրբացրեց եւ առաքեց աշխարհ**[9*]: Արդ, սուրբ եւ անարատ մարմնով Նա միացաւ խաչափայտին ու սրբեց այն՝ մեզ տալով այն որպէս սրբութեան միջոց ընդդէմ դեւերի, մեղքերի, հիւանդութիւնների եւ այլ պղծութիւնների, քանզի ովքեր հաւատով մերձենում են սուրբ խաչին, նրա միջոցով սրբւում են այս ամենից:

Այլեւ խաչը սրբութիւն է մեզ համար, քանի որ Սուրբ Հոգին նրա սրբութեամբ պարգեւուեց մեզ, որովհետեւ **քանի դեռ Յիսուս փառաւորուած չէր, Հոգին էլ չկար**[2]: Ա՛յն Սրբութեան Հոգին, որն Աստուած սկզբում փչեց մարդու երեսին, եւ նա կենդանացաւ շնորհներով[3], սակայն մեղքի հետեւանքով վերցրեց մարդկանցից **նրանց մարմին լինելու պատճառով**[4], եւ խաչի միջոցով Իր Յարութիւնից յետոյ Տէրը վերստին փչեց առաքեալների վրայ՝ ասելով. «**Առէ՛ք Սուրբ Հոգին**»[5]: Ապա բարձրացաւ Հօր մօտ եւ Նրան հաշտեցրեց մարդկանց հետ՝ իբրեւ Իր մահուան ու չարչարանքների պարգեւ աշակերտներին առաքելով Սուրբ Հոգին, որ խաչանման եւ հրեղէն լեզուներով իջաւ նրանց վրայ[6]: Ուստի, երբ յիշատակում ենք Սուրբ Հոգին, մեր դէմքին դրոշմում ենք խաչի նշանը՝ իբրեւ պատճառ եւ նշան մեր մէջ Սրբութեան Հոգու բնակութեան:

Այսպէս խաչը մեզ համար կոչւում է **սրբութիւն, փրկութիւն, արդարութիւն** եւ **իմաստութիւն**:

* * *

Սուրբ խաչի տօնի մասին պէտք է գիտենալ, որ մեր Քրիստոս Աստծոյ տնօրինութեան կա-

1 Տե՛ս Բ Օր. ԺԲ 27, ԻԷ 6:
2 Տե՛ս Յովհ. Է 39:
3 Տե՛ս Ծն. Բ 7:
4 Տե՛ս Ծն. Զ 3:
5 Յովհ. Ի 23
6 Տե՛ս Գործ. Բ 3-4:

տարումից ու երկինք բարձրանալուց յետոյ փրկութեան փայտը՝ սուրբ խաչը, իբրեւ մահապատժի գործիք անխնամ թաղուած էր Գողգոթայում, մինչեւ որ մի անգամ գարնանը, երբ մանուկները սովոր են զբօսնել, նրանցից մէկը, որ ի ծնէ կաղ էր, ընկերների հետ խաղալով եւ աստուածամուխ խաչին մօտենալով, նոյն պահին առողջացաւ ու վազեց՝ օրհնելով Աստծուն եւ գոհանալով սուրբ խաչից: Հաւատացեալներն, այդ տեսնելով, սկսեցին բերել բոլոր կաղերին, կոյրերին, բորոտներին, որոնք ամէնքն էլ բժշկւում էին: Մինչդեռ կոյր եւ խուլ հրեաները, ըստ Եսայու խօսքի, թէ՝ «**Ո՞վ է կոյր եւ խուլ, եթէ ոչ՝ Յակոբի որդիները**»[1], սուրբ խաչը յափշտակելով, տարան դրեցին տաճարի «Գեղեցիկ» կոչուող դռանը: Այնտեղ ողորմութեան համար մի անդամալոյծ էր նստած: Նա քնած էր եւ երբ արթնացաւ, խաչն այդտեղ էր: Եւ նա յանկարծ ամրացած անդամներով ոտքի կանգնեց եւ գնում ու փառաւորում էր Քրիստոսին: Այնուհետեւ մի բորոտ մօտեցաւ, եւ նրա վրայից իսկոյն թօթափուեց ապականուած մաշկը: Եւ շարունակ առաւելանում էր գոհութիւնը աստուածային խաչից:

Հրեաները, այս տեսնելով, խաչը տարան դրեցին գերեզմանի մէջ եւ մի վէմ իբրեւ կափարիչ դրեցին վրան: Վէմի ծերպերից լոյս էր ելնում: Եւ բոլոր հիւանդները, նրա մօտ գնալով, առողջանում էին: Բայց հրեաներն այնտեղ կանգնեցրին Ափրոդիտէի պատկերը, որպէսզի այդ բոլոր հրաշքները նրան վերագրուեն:

Այդ օրերին Կղօդէոս կայսեր կինը՝ Պատրոնիկէն, Պետրոս առաքեալի խօսքի շնորհիւ հաւատաց Քրիստոսին եւ մեծ յոյսով իր որդիների եւ դուստրերի հետ Հռոմից եկաւ Երուսաղէմ: Գերեզմանի մէջ նա երեք խաչափայտ գտաւ, որովհետեւ հրեաներն այնտեղ էին դրել նաեւ Քրիստոսի հետ խաչուած երկու աւազակների խաչափայտերը, որպէսզի նրանց մէջ Տիրոջ խաչափայտը չճանաչուի: Այդտեղ նրա

1 Տե՛ս Ես. ԽԲ 19:

դուստրը յանկարծակի մեռաւ, սակայն հրաշքով յարութիւն առաւ, եւ այդպիսով յայտնի դարձաւ տէրունական խաչը: Պատրոնիկէն կենդանարար սուրբ խաչից մի մաս խնդրեց Ցակոբ առաքեալից եւ այն ստանալով՝ մեկնեց Հռոմ:

Այդ սուրբ մասունքը յետագայում ժառանգեցին սուրբ Հռիփսիմէ եւ Գայիանէ կոյսերը, որոնք երկուսն էլ ազգակից էին կայսրուհուն: Սուրբ Գայիանէն, որը երեք հարիւր կոյսերի կուսանոցի մայրապետ էր, իր հոգեւոր դստեր՝ Հռիփսիմէի պարանոցից կախեց Պատրոնիկէի բերած՝ Տիրոջ արեամբ ներկուած մասունքը: Երբ քրիստոնեաների դէմ հալածանքներ սկսուեցին, նրանք փախան Եգիպտոս՝ Ալեքսանդրիա: Այնուհետեւ եկան Երուսաղէմ, որտեղ հրաման ստացան գնալ Հայաստան: Հասնելով Եդեսիա՝ շատերը մնացին այնտեղ, ուր Փրկչի պատկերն էր, իսկ միւսները եկան Այրարատ:

Ովքեր մնացին Եդեսիայում, նահատակուեցին Դիոկղետիանոս կայսեր կողմից: Իսկ միւսները, Այրարատ գալու ժամանակ անցնելով Տոսպ գաւառով, իբրեւ մեծ պարգեւ Հայաստան աշխարհին թողեցին սուրբ մասունքը, որը եւ մենք Վարագայ խաչ ենք կոչում: Իսկ իրենք նահատակուեցին հայոց Տրդատ թագաւորի կողմից եւ այդպիսով հեթանոս հայ ազգին սրբութեամբ ծնեցին որպէս Աստծոյ որդիներ, ինչպէս յայտնի է նրանց պատմութիւնից:

Կղոդէոս կայսեր վախճանուելուց յետոյ թագաւորութիւնն անցաւ Ներոնին: Դրանից համարձակութիւն ստանալով՝ հրեաները սպանեցին Ցակոբոս առաքեալին, որից յետոյ խաչը վերցնելով՝ տարան թաղեցին մի բարձր տեղ՝ փոսի մէջ, ուր այն մնաց մինչեւ Կոստանդիանոս բարեպաշտ թագաւորի ժամանակները, որ Եկեղեցու համար խաղաղութեան շրջան է կոչւում:

Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէն, որ քրիստոսասէր տիկին էր, մեկնում է Երուսաղէմ՝ փնտրելու աստուածային նշանը: Նա կշտամբում է հրեաներին եւ բազում որոնումներից յետոյ գտնում է խաչափայտը: Այնուհետեւ բարեպաշտ թագուհին իր որդու արքայական հրամանով սուրբ վայրում սքանչելի եկեղեցիներ է կառուցում եւ կարգում միասին տօնել խաչի եւ եկեղեցու նաւակատիքը սեպտեմբերի տասնչորսին[1], որը եւ Խաչվերաց[2] ենք անուանում: Քանզի քահանայապետը ի տես եւ ի պահպանութիւն հաւատացեալների՝ վեր բարձրացրեց խաչափայտը եւ դրեց Գողգոթայում: Եւ մինչեւ Տիրոջ երկրորդ Գալուստը այն այլեւս չի տեղաշարժուելու[10*]:

Սուրբ Դաւիթ մարգարէն, փառաւորելով այս օրուայ պատիւը, ասում է. «**Մեզ հետ նշանուեց Քո երեսի լոյսը**»[3]: Երեսը Աստծոյ Որդին է, իսկ երեսի լոյսը՝ Սուրբ Հոգին, որ խաչի նշանով իջաւ առաքեալների վրայ: Եւ խաչի նշանը դրոշմելով մեզ վրայ՝ հաղորդւում ենք Սուրբ Հոգուն: Եւ ինչպէս որ Յիսուս անտրտունջ եւ լուսաւոր երեսով յանձն առաւ խաչի մահը եւ ուրախ էր սրտով, այնպէս էլ սուրբ խաչը ուրախարար է մեր սրտերի համար ի փառս մեր Քրիստոս Աստծոյ, որ օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

---

1 Այս տօնը յետագայում Եկեղեցին սկսեց նշել սեպտեմբերի 14-ի մօտակայ կիրակի օրը:

2 Խաչվերաց - խաչը վեր բարձրացնելը

3 Սաղմ. Դ 7

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1* Սողոմոն Իմաստունի այս խօսքի գրաբարեան թարգմանութիւնը զգալիօրէն տարբերւում է եբրայերէն բնագրից: Այն վերաբերում է իմաստութեան պարգեւին, որի նշանակութիւնը գովերգելով [Առակ. Գ 13-20]՝ առակողը յորդորում է ողջ կեանքում ամուր կառչել նրանից [Գ 21-30], **քանզի իմաստունները փառք պիտի ժառանգեն, իսկ յիմարները՝ անպատուութիւն** [Գ 35]: Ս. Գրիգոր Տաթեւացին իմաստութեան վերաբերեալ այս խօսքը վերագրում է սուրբ խաչին եւ նրա խորհրդին, որն, ըստ Պօղոս առաքեալի, **կորուսեալների համար յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար՝ Աստծոյ զօրութիւն** եւ **իմաստութիւն** [Ա Կոր. Ա 18, 24], եւ որին ապաւինելով՝ մենք, յիրաւի, իմաստունին խոստացուած **փառքն ենք ժառանգում:**

2* Չպէտք է կարծել, թէ Քրիստոսի տնօրինական բարերարութիւններն ընդամէնը չորսն են, եւ ոչ էլ՝ ենթադրել, թէ այստեղ պարզապէս յիշատակւում են միայն նրանք, որոնք համապատասխանում են խաչի չորս կողմերի խորհուրդներին: Քառաթեւ խաչը յիրաւի ընդգրկում եւ խորհրդանշում է Աստուածորդու գալստեամբ իրագործուած տնօրինութիւնների առանցքը, ամենահիմնական կողմերը:

3* Քրիստոս մեզ համար **բացեց երկինքը**, այսինքն՝ **հաղորդ դարձրեց** իմանալի, հոգեւոր աշխարհին, որը փակ էր մարդկութեան առջեւ Ադամի անկումից ի վեր: Երկնքի բացուելու մասին առաջին անգամ նշւում է Տիրոջ Մկրտութեան ժամանակ, երբ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ Նրա վրայ [Մատթ. Գ 16, Մարկ. Ա 10, Ղուկ. Գ 21, Յովհ. Ա 32]: Այնուհետեւ, երբ Նաթանայէլը Յիսուսին **Աստծոյ Որդի** խոստովանեց [Յովհ. Ա 49], Տէրն ասաց, որ աշակերտները շուտով **կտեսնեն երկինքը բացուած** եւ **Աստծոյ հրեշտակներին՝ բարձրանալիս** եւ **իջնելիս Մարդու Որդու վրայ** [Ա 51]:

Երկնքի բացուելը ապահովեց մարդու շնորհական վերընթացն առ Աստուած եւ խորհրդանշեց նրա՝ Աստծոյ հետ յարաբերուելու սկիզբը: Մինչեւ Քրիստոսի գալուստը երկինքը՝ ճշմարիտ հոգեւոր աշխարհը, հեռու էր մարդուց եւ սկզբունքօրէն անմատչելի. «**Ոչ ոք երկինք չի ելել, եթէ ոչ Նա, որ իջաւ երկնքից՝ Մարդու Որդին, որ երկնքից էր**» [Յովհ. Գ 13]: Քրիստոս Իր խաչի մահով երկինքը մատչելի դարձրեց Իրեն հաւատացողներին՝ նրանց խոստանալով երկնային յաւիտենական կեանք. «**Եւ ինչպէս որ Մովսէսը անապատում բարձրացրեց օձը, այնպէս էլ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի ով Նրան հաւատում է, յաւիտենական կեանքն ընդունի**» [Գ 14-15]: Երկինքն առաւել բացուեց ու մերձեցաւ մարդուն Տիրոջ Յարութիւնից եւ Համբարձումից յետոյ, քանզի Քրիստոս, բարձրանալով երկինք եւ Հօր աջ կողմում նստելով հանդերձ [Մարկ. ԺԶ 19, Ղուկ. ԻԴ 51, Գործ. Ա 9], Իրեն հաւատարիմների **հետ է բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը** [Մատթ. ԻԸ 20]: Այս պատճառով առաջին քրիստոնեաները բազմիցս տեսնում էին **երկինքը բացուած**՝ որպէս իրենց տրուած բացառիկ յայտնութիւն, ինչպէս տեսան Ստեփանոս Նախավկան [Գործ. Է 55] եւ Պետրոսը [Գործ. Ժ 11], քանզի իրենց ներսում կրում էին Քրիստոսին, որ, միաւորուած մարդկանց հոգիներին, սրբագործում է նրանց եւ հոգեղինացնում՝ դարձնելով հրեշտականման ու երկնային, մինչեւ իսկ հոգով Իր մօտ՝ **երրորդ երկինք յափշտակում**՝ լսել տալով **անպատում խօսքեր, որ մարդուն տրուած չէ խօսել** [Բ Կոր. ԺԲ 2, 4]:

4* Քրիստոս **աւերեց դժոխքը**՝ Իր մահից յետոյ հոգով **իջնելով երկրի ստորին կողմը** [Եփես. Դ 9]՝ հոգիների աշխարհը, որոնք բոլորն էլ **բանտարկուած էին** [Ա Պետ. Գ 19], այսինքն՝ ադամական մեղքի պատճառով կապուած էին սատանայի կողմից եւ զրկուած երկնային զօրութիւնների եւ Աստծոյ հետ հաղորդութիւնից: Արդ, Քրիստոս, **կապելով հզօրին** [Մատթ. ԺԲ 29]՝ **սատանային, փրկութիւն քարոզեց հոգիներին** [Ա Պետ. Գ 19] եւ, վճարելով սկզբնական մեղքի **պարտքը, նրանց ազատեց դժոխքից:**

Դժոխքի աւերման խորհուրդը տարածւում է բոլոր այն հոգիների վրայ, ովքեր վախճանուել են առանց Բարի լուրը լսելու: Սակայն ովքեր, լսելով Աւետարանի խօսքը, կամովին հրաժարւում են մկրտութիւնից, մնում են աղամական մեղքի մէջ եւ բոլոր անզեղջ մեղաւորների հետ միասին ենթակայ են լինում դժոխքին՝ **յաւիտենական կրակին, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար** [Մատթ. ԻԵ 41]:

5* Խոկումը քրիստոնէական աստուածպաշտութեան կարեւոր կողմերից է: Այն տեւական խորհրդածութիւն է որոշակի հոգեւոր սկզբունքների շուրջ: Իւրաքանչիւր ճշմարիտ քրիստոնեայ ժամանակ առ ժամանակ բնականօրէն իր սրտի խոհերն ուղղում է դէպի որեւէ կրօնական իրողութիւն եւ բազմաթիւ մտածումներ ծաւալում այդ առնչութեամբ: Ցարատեւ խոկումն օգնում է հոգեւոր սկզբունքի ներհաստատմանը սրտի խորքում եւ նպաստում շատ թերութիւններ յաղթահարելուն: Եկեղեցու վարդապետներն առանձնացրել են մի շարք կարեւորագոյն խոկումներ, որոնց յարատեւութիւնն ամենից անհրաժեշտն է ու ցանկալին: Այդպիսիք են եւ խաչի խորհրդին համապատասխանող չորս խոկումները:

6* **Վերինը խորհել** ընդհանուր առմամբ նշանակում է չլինել երկրահակ ու ստորաքարշ, այլ գիտակցութեամբ մշտապէս վեր գտնուել երկրային կեանքից ու կենցաղից: Այն նաեւ խոկման որոշակի կերպ է, մտորում Աստուածորդու եւ Սուրբ Հոգու փրկական տնօրինագործութեան, Ամենասուրբ Երրորդութեան ինքնաբաւ, բացարձակ Գոյի **մասին, որի ընթացքում մտքի աչքերը** հայում են դէպի վեր՝ դէպի Աստուածութեան երկնային խորանը, **ուր Քրիստոս նստած է Աստծոյ աջ կողմում** [Կող. Գ 1]: Վերինը խորհելը երբեմն յանգեցնում է հոգեւոր, ինքնաբուխ աղօթքի եւ մտասքանչութեան եւ շնորհական հայեցողութեան մէջ՝ Աստծոյ փառքի երանելի ըմբոշխմանը:

7* **Մահուան մասին խոկալը** կամ մահուան յիշողութիւնը վաղնջական բարեպաշտական սկզբունք է: Այն կիրառուել է դեռեւս հեթանոսական խորհրդարկութիւններում (միստերիաներում), ինչպէս նաեւ իմաստասիրութեան մէջ՝ որպէս միտքը զգաստացնող եւ դէպի նպատակը կենտրոնացնող զօրեղ միջոց:

Քրիստոնէական խորհրդածութիւնների համակարգում այն ունեցաւ իր առաւելագոյն զարգացումը: Սուրբ հայրերն ունեն բազմաթիւ ճառեր, քարոզներ ու խրատներ մահուան յիշողութեան մասին, որոնցում այն խիստ կարեւորւում է որպէս խոնարհեցնող, սեփական անձի չնչինութիւնը ճանաչեցնող, մեղքերից եւ անցողիկ հրապոյրներից հեռացնող սկզբունք: Ցաճախակի խոկումը մահուան մասին նպաստում է այս ամենի ներհաստատմանն ու ամրակայմանը, մինչդեռ մահուան մոռացումը աւերում է հոգու ամրութիւնը եւ աւելին, ըստ հայրերի՝ համազօր է դիւահարութեան:

8* **Դատաստանի ընտրութեան մասին** խոկալը ամենաքրիստոնէական սկզբունքներից է, որն օգնում է հաստատուել վախճանաբանական համապարփակ գիտակցութեան մէջ՝ անձի բոլոր բարի մղումներն իմաստաւորելով յաւիտենութեան խորհրդով: Այս սկզբունքն իր իմաստուն երկբեւեռութեամբ քրիստոնեայի միտքն ու սիրտը զերծ է պահում երկու ծայրայեղութիւնից, որոնք են՝ մի կողմից՝ սեփական անձը ինքնախաբօրէն վերջնականապէս փրկուած համարելը, իսկ միւս կողմից՝ մեղքերի առատութեան պատճառով անձի փրկութիւնը յուսահատօրէն բացառելը:

9* Մեկնաբանելով Տիրոջ այս խօսքը [Յովհ. Ժ 36]՝ սուրբ հայրերը նշում են, որ չպէտք է կարծել, թէ Աստուածորդու բնութիւնը երբեւէ կարօտ է եղել սրբութեան: Խօսքն այն մասին է, որ յաւիտեաններից առաջ Հայրը ծնեց Որդուն որպէս Սրբութիւն եւ ժամանակների լրմանը առաքեց աշխարհ մեր փրկութեան համար: Այս խօսքը Տէրն ասաց ի պատասխան հրեաներին՝ նշելու համար, որ Ինքը ոչ թէ հայհոյիչ է, այլ **Իսրայէլի Սուրբը** [Ես. Լ 12, Երեմ. Բ 3]՝ իրենց իսկ սպասած Մեսիան: Որովհետեւ հրեաները զրպարտում էին Իրեն, թէ

հայհոյում է, քանի որ մարդ է, բայց Իրեն իբրեւ Աստուած է ներկայացնում [Յովհ. Ժ 33]:

10* Ըստ Սուրբ Գրքի՝ Քրիստոսի երկրորդ Գալըստեանը երկնքում երեւալու է **Մարդու Որդու նշանը** [Մատթ. ԻԴ 30], այսինքն՝ խաչը: Եկեղեցու վարդապետութեան համաձայն՝ այն ոչ թէ խաչաձեւ լոյս է լինելու, այլ հէնց Տիրոջ խաչափայտը՝ արեգակնափայլ ճառագայթներով, քանզի, ներկուած լինելով Քրիստոսի անապական արեամբ, այն անապական է մնալու եւ Յարութեան օրը երեւալու է իր ողջ փառքով:

Գրաբարից փոխադրեց
Շուշան Վարդանեանը

Խմբագրեց եւ ծանօթագրեց
Տիգրան Խաչատրեանը